ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Կարեն Սարգսյան

Դիմորդ՝ Կարինա Պապիկյան

Չարենց 27ա, բն. 14, Երևան, ՀՀ
+37494959659
karinapapikyan01@gmail.com

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Սարգսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 եւ 51 հոդվածների եւ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկատվություն Գեղարքունիքի մարզի գործող մասնավոր և ոչ մասավոր ֆերմաների վերաբերյալ՝ տեղակայում, կոնտակտ, անասունների գլխաքանակ, օրգանական թափոնների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, եթե այդպիսին առկա է: Ես ներկայացնում նորաստեղծ ընկերություն կենսավառելիքի արտադրության ոլորտից, որի հիմքում ընկած է կենսագազի արտադրությունը օրգանական տարբեր թափոնների քայքայումից: Վերոնշյալ ծրագիրը իրականացվում է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի աջակցությամբ:

Հիմք ընդունելով այն, որ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա

ժամկետ): Խնդրում եմ տեղեկատվությունը ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Կարինա Պապիկյան

25.09.2023